

1789

1918  
3 K 23  
2 - 28



327.2  
130

30 MAY 2005

№ 2 ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ  
№ 2

3K23

4-28

Կ

«Պրոլետարներ բոլոր երկների—միացէք»

Ն. ԼԵՆԻՆ



Ն Ա Մ Ա Կ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՆԻՈՐՆԵՐԻՆ

ՀԱՅԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

327.2(73)+3K3

9.323.9(4)

300  
1311-L6

ՄՈՍԿԻԱ  
Տպարան Եղբ. Կ. և Ռ. ՄՈՒՏՈՒԴԵԱՆԵՐԻ  
1918

1917

1 SEP 2013

7789

300  
13II-16

5  
NOV 2000

## ՆԱՄԱԿ

### ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՆԻՈՐՆԵՐԻՆ

Ընկերներ! Մի ռուս բոլշևիկ, որ մասնակցել է 1905 թ. յեղափոխութեան և այնուհետև երկար տարիներ ապրել է ձեր երկրում, ինձ առաջարկեց յանձն առնել մեզ հասցնելու այս նամակը: Ես այն մեծ գոհանակութեամբ յանձն առայ նրա առաջարկը, որ ամերիկեան յեղափոխական պրոլետարները կոչւած են հենց այժմ խիստ կարևոր դեր խաղալու, որպէս ամերիկեան ամենամտարմ, ամենառուժեղ և կապիտալի արդիւնքները իրար մէջ բաժանելու համար ամենավերջինն այս համաշխարհակին արիւնհեղութեան մասնակցող՝ իմպերիալիզմի անհաշտ թշնամիներ: Ամերիկեան միլիարդատէրները, այդ ժամանակակից սորկատէրները հենց հիմա արիւնահեղ իմպերիալիզմի արիւնոտ պատմութեան մէջ բացեցին ամենատրաղիկ էջը, իրենց համաձայնութիւնը տալով—միւնոյն է ուղղակի, թէ շեղակի, բացարձակ, թէ քծու ծածկամտութեամբ,—անզլ-եալպոնական գաղանների արշաւանքին, որի նպատակն է՝ խեղդել առաջին սոցիալիստական հանրապետութիւնը:

Նորագոյն, բաղաբակիրթ Ամերիկայի պատմութիւնը բացում է մէկն այն, լիբաւի ազատադրական,

յիրաւի յեղափոխական պատերազմներից, որից այնքան քիչ ենք հանդիպել բազմաթիւ աւազակային պատերազմների շարքերում, որ ներկայ իմաստերիալիստական պատերազմի պէս սկսել են արքաների, կալչածաւաէրերի և կապիտալիստների մէջ գրաւած հողերն ու կողոպտած եկամուտները բաժանելու համար: Ամերիկեան ժողովրդի պատերազմն էր այդ անդլիսցի աւազակների գէմ, որոնք գաղութացին ստրկութեան մէջ հարստահարում ու պահում էին Ամերիկան, ինչպէս հարստահարում և ինչպէս գաղութացին ստրկութեան մէջ են պահում այդ «քաղաքակիրթ» արնախումները նոյն իսկ այժմ միլիոնաւոր մարդկանց հնդկաստանում, Եգիպտոսում և աշխարհի բոլոր գաղութներում:

Այդ օրից անցել է մոտ 150 տարի. բուրժուական քաղաքակիրթութիւնը բերեց իր ողջ յետագիմական արդիւնքները: Մարդկային միացեալ աշխատանքի արդիւնագործական ոյժի բարձրութեամբ, մէքենայի և նորագոյն տեխնիքայի ամրող հրաշքներով Ամերիկան առաջնակարգ տեղը գրաւեց ազատ ու լուսաւոր երկրների մէջ: Դրա հետ միաժամանակ լրացած, գարշանքի ու միլիարդների մէջ շաղախւած մի բուռն մարդկանց և յառէտ չքաւորութեան եղերքին ապլոդների մէջ բացւած վիճի խորութեամբ Ամերիկան դարձաւ առաջնակարգ երկրներից մէկը Ամերիկեան ժողովուրդը, որ ֆէօդալական ստրկութեան գէմ յեղափոխական պատերազմի օրինակն է

աւել ամրող աշխարհին, նորագոյն, կապիտալիստական մի բուռն միլիարդատերերի ձեռքին վարձու ստրուկներ գառնալով խաղում է վարձու գահին դեր: 1898 թւին յօդուտ լիրը հարուստների նա խեղեց ֆիլիպպեցիներին՝ նրանց աղատելու պատրւակով, իսկ 1918 թւին գերմանացիներից «պաշտպանելու» պատրւակով խեղդում է ոռւս-սոցիալիստական հանրապետութիւնը:

Մակայն համաշխարհային իմաստերիալիստական չորս տարւայ արիւնեղութիւնն ապարդիւն չանցաւ: Անվիճելի ու հերթական փաստերով դիմակաղերծ է արւած երկու կողմերի էլ—ինչպէս անդլիական, նոյնպէս և գերմանական,—անպիտան աւազակների խարբէութիւնը ժողովրդին: Չորս տարւայ պտտերազմի հետեանքները ցոյց տւին աւազակային կողոպտուաներն իրար մէջ բաժանելու խնդրում կապիտալիզմի բնդիանուր օրէնքը: Ով ամենից հարուստ և ամենից ուժեղ էր, նա կողոպտեց և վաստակեց ամենից շատ, իսկ ով ամենից թողլ էր, նրան մինչև վերջ կողոպտեցին, յօշոտեցին, մնշեցին և խեղդեցին:

Բատ «գաղութային ստրուկների» քանակութեան —անդլիական իմաստերիալիզմի աւազակներն ամենից ուժեղ էին: Անդլիական կապիտալիստները չորցըին «իրենց» հողից (որ գարերի լնթացըում կողոպտել էին) և ոչ մի կառը, ալ, բնդիակառակը, նրանք նոյն իսկ կողոպտեցին գերմանական գաղութները Աֆրիկայում, լավագալեցին Միջադեռքը, Պաղէստինը, խեղ-

գԵցին Յունաստանը և սկսել են կողոպտել Ռուսաստանը:

Գերմանական իմպերիալիզմի աւազակներն ամենաուժեղն էին «իրենց» զօրքերի կազմակերպութեամբ ու կարդապահութեամբ, բայց դադութներով ամենաթուլը: Նրանք կորցրին իրենց բոլոր գաղութները, բայց դրա հակառակ կողոպտեցին Եւրոպայի կէսը, խեղդեցին մեծ քանակութեամբ մանր երկներ ու թոլ ժողովուրդներ: Որպիսի՞ մեծ, «ազատագրական» պատերազմ երկու կողմից: Ինչպէս լաւ «պաշտպանեցին» երկու կողմերի, անզլ-ֆրանսիական և գերմանական աւազակներն իրենց լաքէների ու սոցիալ-շովինիստների, այսինքն այն սոցիալիստների հետ, որոնք անցել են «իրենց» բուրժուազիայի կողմը:

Ամերիկան միլիարդատերերը գրէ թէ ամենքից հարուստ էին և գտնւում էին աշխարհագրական ամենաանվտանգ տեղում: Նրանք ամենքից շատ օգտագինն: Նրանք իրենց պարտքերով կալան ամբողջ աշխարհը, ոյն իսկ ամենահարուստ երկները: Նրանք կողոպտեցին հարիւր-միլիարդ դոլարներով: Եւ իւրաքանչիւր դոլարի վրայ նկատելի են աղբի հետքերը: Անզլիայի ու իր «գաշնակիցների», Գերմանիայի են Անզլիայի գաղութի պայմանի պայմանագրերի, կողոպտած արդիւնքները բաժանելու, բանւորական շարժումները ճնշելու նպատակով և սոցիալիստինտերնայինիստներին հաղածելու համար մէկ

մէկու խոստացած օգնութեան գաղտնի պայմանագրերի հետքերը: Իւրաքանչիւր դօլարի վրայ—պատերազմական տառքերի եկամուտների կեղտ, որ ամեն երկրում հարուստներին էլ աւելի հարստացնելով քայլայի է չքաւորներին: Իւրաքանչիւր դօլարի վրայ արեան հետքեր այն արեան ծովից, որ ազնիւ, ազատարար, սրբազան պալքարի մէջ թափել են 10 միլիոն սպանածներ և 20 միլիոն հաշմանդամներ: Պայքար, որ մզւու մ էր նրա համար, թէ անզլիական ու գերմանական աւազակներից ո՞րն աւելի շատ կը շահուի, անզլիական և գերմանական դահիճներից ո՞րը կլինի առաջինն ամբողջ աշխարհի մանր ժողովուրդներին խեղդողներից:

Եթէ գերմանական աւազակներն իրենց պատերազմական դադանութիւններով ու էկորդ խփեցին, անզլիացիներն էլ ու էկորդ խփեցին ոչ միայն կողոպտած գաղութների քանակով, այլ և իրենց զգւելի քննութեան նրբութեամբ: Հէնց այժմ անզլ-ֆրանս-ամերիկան բուրժուական մամուլը Ռուսաստանի մասին միլիոն-միլիոնաւոր օրինակներով տարածում է կեղծիքներ ու զրպատութիւն, քննաբար արլարացնում է իրենց աւազակային արշաւանքն Ռուսիայի վրայ, իբր թէ Ռուսիան «պաշտպանում» ևն Գերմանիայից:

Այդ ստոր ու լիրք ստերը հերքելու համար անհրաժեշտ չէ շատ խօսքեր վատնել. բաւական է մատնանշել մի հանրածանօթ փաստ: Երբ 1917 թւին Ռուսիայի բանւորները տապալեցին իրենց իմպերիա-

լիստական կառավարութիւնը, Սովէտական իշխանութիւնը, յեղափօխական գիւղացիութեան ու բանուորների իշխանութիւնը բացարձակ առաջարկեց արդար հաշտութիւն, առանց աններսիայի ու կոնտրիբուցիայի, հաշտութիւն—բոլոր ազգութիւնների կատարեալ իրաւահաւասարութեան պաշտպանութեամբ: Սովէտական կառավարութիւնն այսպիսի հաշտութիւն առաջարկեց բոլոր կուող պետութիւններին:

Հէնց անգլ-ֆրանսիական և ամերիկեան բուժուաղիան էր, որ չբնունեց մեր առաջարկը, հէնց նա հրաժարեց մեզ հետ նոյն իսկ խօսել ընդհանուր հաշտութեան մասին: Հէնց նա գաւանանական վերաբերմունք ունեցաւ դէպի բոլոր ժողովրդների շահերը, հէնց նա էր, որ ծգծգեց իմպերիալիստական արիւնիեղութիւնը:

Հէնց նա էր, որ Ռուսիան իմպերիալիստական պատերազմին մասնակից անելու նպատակով խուսափեց հաշտութեան բանակցութիւններից և ալղակով բացեց գերմանական աւազակ կապիտալիստների ծեռքերը, որոնք Ռուսիայի վղին փաթաթեցին Բրեստի բոնի, աններսիոնական հաշտութիւնը:

Դժւար է երեւակայել աւելի լիրք կեղծիք, քանի այն, որով անգլ-ֆրանսիական և գերմանական բուժուաղիան Բրեստի հաշտութեան «մեղքը» մեզ վրայ է ծգում: Հէնց այն երկների կապիտալիստները, որոնցից էր կախւած Բրեստը ընդհանուր հաշտութեան ընդհանուր բանակցութիւնների վայր դար-

ծնել, հէնց նրանք են հանդէս զալիս մեզ «մեղադրող-ների» գերում: Անգլ-ֆրանսիական իմպերիալիզմի գիշակերները, որոնք կարողութիւն են դիզել գաղութներում և ժողովուրդների արիւնհեղութեան մէջ աւազակութիւն անելով, Բրեստից յետոյ պատերազմը ծգծգեցին մօտ մի տարի և նրանք էլ «մեղադրում» են մեզ, բոլցեիներիս, որ արդար հաշտութիւն առաջարկեցինք բոլոր երկրներին, մեզ, որ պատուեցինք, հրատարակեցինք, հանրութեան անարդանքին աւինք նախկին ցարի և անգլ-ֆրանսիական կապիտալիստների դաշտանի, մեղսոս պայմանադրերը:

Ամբողջ աշխարհի բանուորները, ինչ երկրում էլ նրանք ապրելիս լինեն, ողջունում են մեզ, մեզ ծափանարում են նրա համար, որ մենք կարեցինք իմպերիալիստական կապերը, իմպերիալիստական կեղտու պայմանագրերը, իմպերիալիստական շղթաների երկաթէ օղակները,—նրա համար, որ մենք դուրս եկանք ազատութեան հրապարակ, ամենածանր զոհաբերութիւններն անելով յանուն դրան,—մեզ ծափանարում են նրա համար, որ մենք, որպէս սոցիալիստական, թէկուզ և յօշոտւած, իմպերիալիստների ծեռքավ կողոպտւած հանրապետութիւնն, մնացինք իմպերիալիստական պատերազմից դուրս, և ամբողջ աշխարհի առաջ պարզեցինք հաշտութեան դրօշը, սոցիալիզմի դրօշը:՝

Զարմանալի չէ, որ միշազգային իմպերիալիզմի բանդան մեզ ատում է դրա համար, զարմանալի չէ,

որ նրանք ամենքը և նրանց հետ մեր աշ էս-էրներն ու մենչեիներն էլ մեզ «մեղադրում են», որպէս իմ-պերիալիսաների լաքէներ: Իմպերիալիզմի այդ պահապան գտաճրոների ատելութեան, այլ և բոլոր երկրների դժանկից աշխատաւորութեան համակրութեան մէջ մենք տեսնում ենք արդար դործի հաւասարիքը:

Սոցիալիստ չէ նա, ով չէ հասկանում, որ յանուն բուրժուազիային լաղթելու, յանուն միջազգացին պրոլետարական յեղափոխութիւն սկսելուն կարելի է և պէտք կանդ չառնել ո՛չ մի զոհարերութեան առաջ, նոյն իսկ աերիաորիայի մի մասի դոհարերութեան, իմպերիալիզմից ստացած ծանր պարտութեան առաջ: Սոցիալիստ չէ նա, ով գործով չապացուցեց «իր» հալրենիքից մեծ զոհարերութիւն աներու պատրաստակամութիւնը, միայն թէ սոցիալիստական յեղափոխութեան գործը հաստատալեա առաջ տարւի:

Յանուն «իրենց» դործի, այսինքն յանուն համաշխարհային տիրապետութիւն նւաճելու՝ Անդիիշի ու Գերմանիայի իմպերիալիստները կանդ չառան ամբողջ շարք երկրներ քայլակելու և խեղդելու առաջ սկսած Բելգիայից ու Սերբիայից—մինչև Պաղէստին ու Միջագետք: Դէ, սոցիալիստներն էլ յանուն «իրենց» գործի, յանուն ամբողջ աշխարհի աշխատաւորութիւնը կապիտալի լծից աղատելու, յանուն ընդհանուր, հաստատուն հաշտութեան նւաճման, նրանք պէտք սպասէին, մինչև որ գտնւէր նաև

պարհ առանց դոհերի... պիտի վախենային, արդեօք, պատերազմ սկսելուց, քանի որ թեթև յաշողութեան «երաշխիք» չկայ, նրանք պէտք է, արդեօք, «իրենց», բուրժուազիայի ստեղծած «հալրենիքի» ապահովութիւնն ու ամբողջութիւնը գերազասէին համաշխարհին, սոցիալիստական յեղափոխութեան շահերից: Եռակի անարգանքի են արժանի միջազգային սոցիալիզմի այն գետաները, բուրժուական բարոյագիտութեան այն սպասաւորները, որոնք ազգպէս են մտածում,

Անգլ-ֆրանսիական և ամերիկական իմպերիալիզմի զիշատիչ գաղանները մեղադրում են մեզ, որ «համաձայնութեան» եկանք գերմանական իմպերիալիզմի հետ:

Օ՛, վարիսեցիներ! Օ՛, անպիտաններ! զբարտում են բանւորական կառավարութեանը, սարսափելով այն համակրութիւնից, որ տածում է այդ կառավարութեանն «իրենց» երկրների աշխատաւորութիւնը! Բայց կդիմակագերծւի նրանց վարիսեցիութիւնը: Նրանք ծեւանում են, իբր թէ չեն հասկանում «սոցիալիստների» համաձայնութիւնը բուրժուազիայի (իրենց և օտար) հետ՝ ընդդէմ աշխատաւորութեան, ընդդէմ բանւորների, իբր թէ չեն հասկանում, թէ ի՞նչ է նշանակում համաձայնութիւն —յանուն իր երկրի բուրժուազիային տապալող բանւորութեան, համաձայնութիւն մի գոյնի բուրժուազիայի հետ, ընդդէմ ուրիշ աղքային երանգի բուրժուազիայի —բուրժուական զանազան խմբակների

հակամարտութիւնը յօդուտ պրօլետարիատի օդտագործելու համար:

Յիրաւի, իւրաքանչիւր երոպացի շատ լաւ զիտէ այդ տարբերութիւնը, իսկ ամերիկեան ժողովուրդը, ինչպէս ես հիմա ցուց կտամ, կեանքի փորձով է «ապրել» այդ իր սեփական պատմութեան մէջ: Համաձայնութիւն էլ կայ, համաձայնութիւնն էլ, fagots et fagots, ինչպէս ասում են Փրանսիայիները:

Երբ 1916 թւին դերմանական իմպերիալիզմ զիշատիչներն իրենց զօրքերը շարժեցին անգէն, զօրաթողւած Ռուսիայի դէմ, որը դեռ միշագդային յեղափոխութիւնը հասունանալուց առաջ վստահ էր միշագդային պրօլետարիատի համերաշխութեան, այն ժամանակ ես բնաւ չէի տատանւում որոշ «համաձայնութեան» զալ ֆրանս միապետականների հետ: Փրանսիական կապիտան Սատուլը, որ խօսքով համակրում է բոլշևիներին, իսկ զործնապէս յուսով ու հաւատով ծառայում էր Փրանսիական իմպերիալիզմին, ինձ մօտ բերեց Փրանսիայի սպազ դէ-Լիւրերսակին: «Ես մոնարխիստ եմ. իմ միակ նպատակն է Գերմանիայի պարտութիւնը», — յայտարարեց ինձ դէ-Լիւրերսակը: Այդ ինքն ըստ ինքեան, պատասխանեցի ևս (Cela va sans dire): Այդ ինձ բոլորովին չըխանգարեց «համաձայնութեան» զալ դէ-Լիւրերսակի հետ այն ծառայութեան համար, որ ցանկանում էին անել մեղ՝ տուն քանդելու մասնագէտները, Փրանսիական սպաները գերմանացոց արշաւը կանգնեցնելու նպատակով երկաթուղին խոր-

տակելու համար: Սա «համաձայնութեան» մի նմուշ էր, համաձայնութիւն յօդուտ սոցիալիզմի, որին հաւանութիւն կտայ իւրաքանչիւր գիտակից բանոր: Ես և Փրանսիացի մոնարխիսար մեղծեցինը իրար ձեռք, իմանալով, որ մեղնից իւրաքանչիւրը գոհունակութեամբ կրկախէր իր «ընթերակային»: Բայց մեր շահերը ժամանակաւորապէս զուգորդւեցին: Գերմանական արշաւող - զիշատիչների դէմ, յօդուտ ուսական և միջազգային սոցիալիստական յեղափոխութեան՝ մենք օդտագործեցինք նոյնքան գաղանային հակաշահերը ուրիշ իմպերիալիստների:

Այսպիսով մենք ժառայեցինք ուսւ և ուրիշ երկրների աշխատաւորութեան շահերին, մենք ուժեղացրինք պրոլետարիատը և թուլացրինք ամբողջ աշխարհի բուրժուազիան, մենք գործ ածեցինք ամենաօրինական և բոլոր պատերազմների ժամանակ պարտադիր վարժութիւնները, յարմարումք, նահանջը այն մոմենտի սպասումով, երբ վերջնապէս կհասունանայ մի շարք առաջնակարգ երկրներում արագ զարգացող պրոլետարական յեղափոխութիւնը:

Եւ ինչքան էլ չարութիւնից ոռնան անդլ-Փրանսիական իմպերիալիզմի մարդագալերը, որքան էլ նրանք զրպարտեն մեղ, որքան էլ իրենց միլիոններով կաշառեն աշ էս-էրական, մենշերիկական և այլ սոցիալ-պատրիոտական թերթերը, ես ոչ մի վայրէն չեմ վարանի նոյն պիսի ահամաձայնութեան» դալու գերմանական իմպերիալիզմի

րի հետ կուռում էր հարստահարող անզլիացիների գէմ, նա յաղթեց նախ անզլիացիներին, իսկ յետով ազատազրւեց (մասամբ գնելով) Փրանսիացիներից ու սպանացիներից:

Պատմական գործունէութիւնը նևսկի պրոսպէկտի մայթերը չեն,—ասել է ոռու մեծ յեղափոխական Զերնիշեսկին: Ով «Երևակայում է» պրոլետարական յեղափոխութիւնը միայն «այն պայմանով», որ նա ընթանալ թեթև ու սահուն, որ միանդամից ապրու երկրների պրոլետարների միասնական գործունէութիւն ստեղծւի, յաջողութեան երաշխիք տրւի, որ յեղափոխութեան ճանապարհով լինի լայն ու ազատ և գէպի յաղթանակ գնալիս չկրի ամենածանր զօհարերութիւն, ստիպւած չը լինի անստել պաշարուած քերլում», կամ յեղափոխութիւնը ստիպւած չինի անցնել ամենանեղ, տատասկոտ և լեռնային վտանգաւոր ճանապարհներով,—նա յեղափոխական չէ, նա իրեն չի ապաստղել բուրժուական ինտելիգենցիայի տառակեր հոգերանութիւնից, նա գործնական կեանքում միշտ էլ կը հակւի հակածեղափոխական բուրժուազիայի գիրկը, ինչպէս մեր աջ էս-էրները, մենշենիները և նոյն իսկ (թեկուզ սակաւ) ձախ էս-էրները:

Բուրժուազիայի հետ այդ պարոններն էլ սիրում են մեղ մեղադրել յեղափոխութեան «քաօսի», արդիւնաբերութեան կործանման, անզործութեան ու քաղցի մէջ:

դիշատիչների հետ, եթէ այդ պահանջի ինձնից անզլիացիների արշաւուր: Եւ Ես գերազանցապէս գիտեմ, որ իմ տակտիկան կիսրախուսուի Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի, Ամերիկայի, մի խօսքով՝ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի գիտակից պրոլետարիատը: Այդպիսի տակտիկան կըթեթեացնի միջաղղային յեղափոխութեան գործը, կարաքացնի նրա արշաւը, կիթուլացնի միջաղղային բուրժուազիան, կուժեղացնի նրան յաղթող բանւոր դասակարգի գիրերը:

Ամերիկեան ժողովուրդը վաղուց է գործածել այդ տակտիկան, և գործ է ածել յօդուտ յեղափոխութեան: Այն ժամանակ նա իր մեծ, ազատազրական պատերազմն էր մղում հարստահարող անզլիացիների դէմ, նրա դէմ նոյնպէս կանգնած էին հարստահարող ֆրանսիացիք ու սպանացիք, որոնց էր պատկանում ներկայիս Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների մի մասը: Իր ազատազրական գժւարին պատերազմում ամերիկեան ժողովուրդը նոյնպէս «համաձայնութեան» եկաւ մի հարստահարչի հետ, ընդդէմ միւսի—յօդուտ հարստահարիների թուլացման և զօրեղացման նրանց, ովքեր յօդուտ ճնշւածների յեղափոխական պալքար էին մղում ճնշողների դէմ: Ամերիկեան ժողովուրդն օդատաղործեց ֆրանսիացիների ու անզլիացիների մէջ արդէն գոյսութիւն ունեցող տարածայնութիւնները, նա, երբէմն նոյն իսկ հարստահարող ֆրանսիացի ու սպանացի զօրքե-

Որքա՞ն կեղծում են այն մեղաղը ողները, որոնք ողջունել և աշակցել են իմպերիալիստական պատերազմը կամ «համաձայնել» են այդ պատերազմը շարունակող կերենսկուն։ Հենց իմպերիալիստական պատերազմն է մեղաւոր այս ողջ աղէտների մէջ։ Յեղափոխութիւնը, որ ստեղծել է պատերազմը, չի կարող չանցնել անհաւատալի դժւարութիւնների և տանջարների միջով, որ ժառանգութիւն է մնացել բազմաթիւ տարիներ տեղող ժողովուրդների կործանարար, ուկալիցիոն արիւնհեղութիւնից։ Մեղ մեղադրել արդիւնաբերութեան «քայլայման» կամ «տերրորի» մէջ, կընշանակի կեղծել կամ երևան հանել բուժտառակերութիւն, անընդունակութիւն՝ հասկանալու կատաղի, ծալր աստիճան սրւած դասակարգային պայքարը, որ կոչւում է յեղափոխութիւն։

Էապէս, նման տեսակի «քաղքենիները», եթէ «հանաչում» էլ են դասակարգային պայքարը, սահմանափակում են լոկ բառացի ընդունելով այն, իսկ դորձնապէս շարունակ ընկնում են «համաձայնութեան» և դասակարգերի «աշխատակցութեան» մեշտական երազանքի մէջ։ Որովհետեւ յեղափոխութեան շրջանում դասակարգային պայքարն անխուսափելիօրէն և բնականօրէն միշտ և ամենուրեք քաղաքացիական կռւի կերպարանք է ընդունել, ուստի և քաղաքացիական պատերազմն անհնարին է ոչ առանց տերրորի, ոչ առանց կապարային կացութիւնը խորտակնելու, և ո՛չ էլ յանուն կուլի՛ մեական դեմոկրա-

տիային ննշելու։ Միայն պորտաբոյծ տէրտէրները, միւնոյն է քրիստոնէական, թէ աշխարհական—յանձինս պարլամենտական, աղ դրած սոցիալիստների—կարող են չտեսնել, չհասկանալ և չըմբռնել այդ անհրաժեշտութիւնը։ Միայն մեռած մարդիկ, միայն «պատենաւոր մարդիկ» ընդունակ են գրա պատճառով հեռանալ յեղափոխութիւնից, փոխարէն ամենայն խստութեամբ և վնասկանութեամբ կռւի ասպարէզը նետաելու այն ժամանակ, երբ պատմութիւնը պահանջում է մարդկութեան մեծադոյն խնդիրները պայքարով ու կռւով լուծել։

Ամերիկեան ժողովրդի մէջ կալ յեղափոխական արագիցիա, որով տողորւել են ամերիկեան պրոլետարիատի լուադոյն ներկայիշները, որոնք քանից կատարեալ համակրանք են արտայալել մեզ, բոշկեկներիս։ Այդ արագիցիան է ազատամարտն Անգլիայի դէմ XVIII դարում, քաղաքացիական պատերազմը XIX դարում։ 1870 թւին Ամերիկան մի քանի կողմից, եթէ վերցնենք արդիւնաբերութեան և ժողովրդական տնտեսութեան մի քանի ճիւղերի «քայլայումը», յետ էր մնում 1860 թւից։ Բայց ինչ տառակեր ու ապուշ պիտի լինէր այն մարդը, որ դրա հիման վրայ սկսէր ժխտել 1860—65 թ. Ամերիկայում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի համաշխարհային պատմական, պրոգրեսիսիւ և յեղափոխական նշանակութիւնը։

Բիւրժուազիայի ներկայիշները հասկանում են, որ նեղերի ստրկութեան տապալու 7/11. 1922



ըերի իշխանութեան կործանումն արժէր, որ ամբողջ երկիրը տարիներ շարունակ եռար քաղաքացիական պատերազմի բովում, աւերանքի անդրնդի, փլուզումի և տերրորի մէջ, որոնք բղխում են ամեն պատերազմից: Բայց այժմ, երբ բանը հասնում է անչափելիօրէն մեծ հարցին՝ վարձու կապիտալիստական սարկութիւնը կործանելուն, բուրժուազիայի իշխանութիւնը տապալելուն,—այժմ բուրժուազիայի պաշտպաններն ու ներկալիչները հաւասարապէս նաև սոցիալիստ-ռեֆորմիստները վախեցած բուրժուազիայից, լեզապատառ եղած յեղափոխութիւնից՝ չեն կամենում հասկանալ—քաղաքացիական պատերազմի անհրաժեշտութիւնն ու օրինականութիւնը:

Ամերիկայի բանւորները չեն գնայ բուրժուազիայի յետեմից: Նրանք կինին մեղ հետ միասին բուրժուազիայի դէմ քաղաքացիական կուին կողմնակից: Եւ այդ համոզմունքս աւելի հաստատուն է դարձնում համաշխարհային և ամերիկեան բանւորութեան ամրող պատմութիւնը: Ես լիշում եմ ամերիկեան պրոլետարիատի ամենասիրելի առաջնորդներց մէկի եւգենի Դօրսի ան խօսքերը, որ զըել էր «Appeal to Reason»-ում («Կոչ դէպի բանականութիւնը»)՝ կարծեմ 1915 թ. վերջին—իր What shall fight for—«Յանուն ինչի պիտի կուեմ»—1916 թ. սկզբին ես քաղւացըներ եմ արել այդ յօդւածից նվեցարիայի թերն քաղաքում բանւորական հրատարակային մի դասախոսութեան ժամա-

նակ)՝որ նա, Դօրսը, աւելի շուտ թոյլ կտար գրնդականար անել իրեն, քան ծայն կտար արդի ոճրագործ և ռէակցիոն պատերազմի փոխառութեան, որ նա, Դօրսը, պրոլետարների ակսակէտից միայն սրբազն ու օրինական մի պատերազմ է հանաչում, լոկ—պատերազմը կապիտալիստների դէմ, պատերազմ յանուն մարդկութեան աղատագրման վարձու սոլոր կութիւնից:

Ես չեմ դարձանում, որ ամերիկեան միլիարդէրների պարագլուխ, կապիտալիստների ակցիաների սպասւոր Վիլսոնը բանտն է գցել Դօրսին: Թող գազազի բուրժուազիան իսկական ինտերնացիոնալիստների դէմ: Որքան կատաղի ու գաղանական լինի նա—այնքան մօտ է պրոլետարական յաղթական յեղափոխութեան օրը:

Մեղադրում են մեղ մեր յեղափոխութեան պատճառած աւերների համար... Եւ ովքէ՞ր են մեղադրողները:—Բուրժուազիայի պոչերը, այն բուրժուազիայի, որ իմպերիալիստական պատերազմի չորս տարիների ընթացքում կործանելով եւրոպական գրեթէ, ամբողջ կուլտուրան, եւրոպան հասցրեց բարբարոսութեան, վայրենացման և սովի դուռը: Եւ այժմ այդ բուրժուազիան պահանջում է մեղնից, որ մենք յեղափոխութիւնը կատարենք ո՛չ թէ իր ալդ աւերների վրայ, կալտուրայի բեկորների վրայ, բեկորներ և աւերակներ, որ ստեղծել է պատերազմը

պատերազմից վայրադնացած մարդկանց մեռքով: 0՝  
ինչ մարդասէր և արդար է այդ բուրժուազիան:

Նրա սպասաւորները մեղ մեղազրում են տեր-  
րորի համար... Անդիմական բուրժուաները մոռացել  
են իրանց 1649 թւականը, Ֆրանսիացիք իրենց  
1793 թւականը: Տերրորն արդարացի և օրինական էր,  
երբ այն գործ էր ածում բուրժուազիան իր օգտին՝  
ֆէոդալների դէմ: Տերրորը ահուելի ու յանցաւոր  
դարձաւ, երբ բանւորներն ու աղքատ գիւղացիները  
համարձակւեցին կատարել այն բուրժուազիացի դէմ:  
Տերրորն օրինական ու արդարացի էր, երբ կատա-  
րում էին կեղեքող մի փոքրամասնութեան շահերը  
միւս կեղեքող փոքրամասնութեան շահերով փոխա-  
րինելու համար: Եւ տերրորն աններելի ու յանաց-  
ւոր դարձաւ, երբ սկսեցին կատարել այն յանուն  
ամեն տեսակ կեղեքիչ փոքրամասնութեան շահերը  
կործանելու, յանուն պրոետարիատի և կիսապրոե-  
տարիատի, բանւորութեան և աղքատ գիւղացիու-  
թեան շահերի:

Միջազգային իմպերիալիզմի բուրժուազիան կո-  
տորել է 10 միլիոն մարդ «իր» սպատերազմում և  
հաշմել՝ 20 միլիոն: Եւ այդ այն սպատերազմում, որ  
պիտի որոշէր՝ անդիմական, թէ գերմանական դիշա-  
կերները պիտի տիրապետեն ամբողջ աշխարհ:

Եթէ մեր սպատերազմը, մնշամների և կեղեք-  
ւածների պատերազմն ընդգէմ ճնշողների ու կեղե-  
քողների, մէկ կամ կէս միլիոն զոհ սպահանջի բոլոր

Երկրներում, — բուրժուազիան կասի, որ առաջին  
զոհերն օրինական են, երկրորդ զոհերն՝ ապօքինի:

Պրոլետարիատը բոլորովին այլ բան կասի:

Պրոլետարիատը իմպերիալիստական սպատերազմի  
սարսափների մէջ այժմ լիովին և փորձնապէս իւրա-  
ցնում է այն մեծ ճշմարտութիւնները, որ ուսուցանում  
են բոլոր յեղափոխութիւնները, ճշմարտութիւն, որ  
աւանդել են բանւորներին իրենց լաւագոյն ուսու-  
ցիչները՝ ժամանակակից սոցիալիզմի հիմնադիրները:  
Այդ ճշմարտութիւնն այն է, որ չէ կարող արգա-  
սաւոր, յաջողակ յեղափոխութիւն լինել, առանց կե-  
ղեքիչների դիմադրութիւնը ճնշելու: Երբ մենք՝ բան-  
ւորներս ու աշխատաւոր գիւղացիներս, մեր մեռքն  
առանք պետական իշխանութիւնը, մոր սպարաքն էր՝  
ճնշել կեղեքիչների դիմադրութիւնը: Մենք հպարտա-  
նում ենք, որ արինք և անում ենք այդ: Մենք յա-  
ւում ենք, որ հարկաւոր չափով հաստատուն ու  
կարուկ չենք կարողանում անել այդ:

Մենք գիտենք, որ բոլոր երկրներում բուրժու-  
ազիայի կատարդի ընդդիմութիւնն անխուսափելի է  
սոցիալիստական յեղափոխութեան հանդէպ և որ նա  
պիտի աճի այդ յեղափոխութեան զօրանալու հետ:  
Պրոլետարիատը կկոտրի այդ ընդդիմութիւնը, նա  
վերջնապէս հնասունանայ յաղթանակի և իշխանու-  
թեան համար դիմադրաւող բուրժուազիայի դէմ  
կոիւ մղելու միջոցին:

թալց, եթէ նոյնիսկ զրա հակառակը լի-  
նէր, թէւ ևս գիտեմ, որ այդ սխալ է թոյլ տալ  
եթէ նոյնիսկ մեր իւրաքանչիւր 100 անսխալ ակ-  
տերին գար 10,000 սխալ, այնուամենայնիւ մեր  
յեղափոխութիւնը կինէր, և նա կինի այդպէս հա-  
մաշխարհային պատմութեան առջև, հոյակապ ու  
անպարտելի, որովհետեւ առաջին անգամ ո՛չ թէ փո-  
քրամասնութիւնը, ոչ թէ մենակ հարուստներն և  
ուսումնականները, այլ իսկական մասսան, աշխա-  
տաւորների հոծ մեծամասնութիւնն է կառուցում  
նոր կեանքը, իր փորձով ու տքնանքով վճռում սո-  
ցիալիստական կաղմակերպութեան բարդ հարցերը:

Այլպիսի աշխատանքի մէջ դորձած իւրաքան-  
չիւր սխալը, իրենց տմբողչ կեանքը վերակազմելու  
համար թափած տասնեակ միլիոն հասարակ բան-  
ւորների ու գիւղացիների այդ ամենաբարեխիղն և  
ամենաանկեղծ աշխատանքի իւրաքանչիւր մէկ այդ-  
պիսի սխալն արժէ հաղարաւոր ու միլիոնաւոր  
«անսխալ» յաշողութիւններին, կեղեքիչ փոքրամասնու-  
թեան յաշողութիւններ, որ իրօր խարեբայութիւն  
են և տանշանքը բանւորների: Որովհետեւ միայն այդ-  
պիսի սխալներից յետոյ է, որ բանւորներն ու գիւ-  
ղացիները կսովորեն եօլա գնալ առանց կապիտալիստ-  
ների, միայն այդպիսաով նրանք իրենց համար ուղի-  
կհարթեն հազարաւոր խոշնդրուաների վրայից յադ-  
թական սոցիալիզմին համնելու:

Թող ի լուր արար աշխարհի պոռայ կաշառ-  
ւած բուրժուական մասուլը մեր յեղափոխութեան  
իւրաքանչիւր սխալի մասին: Մենք չենք վախենում  
մեր սխալներից: Յեղափոխութիւն սկսւելուց մար-  
դիկ սրբեր չեն դարձել: Անսխալ յեղափոխութիւն  
չեն կարող կատարել այն աշխատաւոր գասակարգե-  
րը, որոնք դարեր շարունակ ճնշել, մոռացւել, բրո-  
նութեամբ նեղւել են աղքատութեան, տղիտութեան  
և վայրենութեան ճիրաններում: Եւ բուրժուական  
հասարակութեան դիակը, ինչպէս մի անգամ տոիթ  
եմ ունեցել մատնանշելու, չի կարելի գամել դադա-  
ղին ու հողին տար: Մպանւած կապիտալիզմը փառում  
է, նեխում մեր մէջ, օդն ապականելով միաղմներով,  
թունաւորելով մեր կեանքը, նորը, թարմն ու մատ-  
դաշը, թթուունը՝ կաշկանդելով նախկին հին ու հո-  
տած անցեալի հազարաւոր թելերով:

Մեր սխալների իւրաքանչիւր հարիւրակին, որի  
մասին ի լուր աշխարհի պոռում է բուրժուազիան  
և իր սպասաւորը (ի թիւս որոնց մեր մենշեկիներն  
ու աջ էս-էրները), գալիս է հերոսական բիւրաւոր  
դրւագներ առաւել ևս մեծ ու հերոսական, որովհե-  
տեւ նրանք հասարակ, աննկատելի են, Փաբրիկապին  
թաղի առօրեայ կեանքի ծոցում, կամ յետ ընկած  
գաւառի մի գիւղում և կատարւել են այնպիսի մարդ-  
կանց ծեռքով, որոնք չեն ընտելացել (և հնարաւո-  
րութիւն էլ չունին) ի լուր աշխարհի տարփողել իրենց  
յաշողութիւնը:

Իրենց յեղափոխական աշխատանքն անելիս սխալներ են գործում մեր դեղջուկները, որոնք մի հարւածով մի դիշերի բնթացքում, հոկտեմբերի 25-ից լոյս 26-ը (հ. ա.) 1917 թ., վերացրին ամեն տեսակի մասնաւոր հողավին սեփականութիւնը և այժմ, ամսից-ամիս յաղթահարելով անանցանելի դժւարութիւններ, ուղղելով իրենք իրենց, գործնապէս վճռում են տնտեսական կեանքի նոր պայմանների կազմակերպութեան դժւարին խնդիրները՝ պայքար կուլակների դէմ, հողն անպայման տալ աշխատաւորներին (և ոչ ունեւորներին), փոխանցումն դէպի կոմմունիստական խոչոր հողագործութիւնը:

Իրենց յեղափոխական աշխատանքը կատարելիս սխալներ են դործում մեր բանւորները, որոնք այժմ, մի քանի ամսում, պետականացրել են դրեթէ բոլոր խոշոր Փաքրիկներն ու գործարանները և ամենօրեայ դժւարին փորձով սովորում են արդիւնաբերութեան ամրոջ ճիւղերի գործը նոր ուղղութեամբ փարելու, կարգի են բերում պետականացրած տնտեսութիւնները, յաղթահարելով տափակութեան, մանր-բուրժուականութեան, եսականութեան հսկայական ընդդիմադրութիւնը և քարը քարի յետեից հասարակական նոր յարաբերութիւնների հիմքը դնում, աշխատաւորական նոր դիսցիպլինի, պրոֆեսիոնալ միութիւնների իշխանութիւնն իրենց անդամների վրայ հաստատելու նոր հիմքը:

Իրենց յեղափոխական աշխատանքը կատարելիս սխալներ են գործում մեր Խորհուրդները, որ ստեղծւել են դեռ ևս 1905 թ. մասսաների հզօր ծառացումով: Բանւորների և գիւղացիների Խորհուրդներ — պետութեան նոր տիպ, դեմոկրատիզմի նոր փակ տիպ, այդ պրոլետարիատի դիկտատուրայի մի ձև է, մի միջոց կառավարելու պետութիւնն առանց բուրժուազիայի և բուրժուազիայի դէմ: Առաջին անդամը դեմոկրատիան այստեղ ծառայում է մասսաների համար, աշխատաւորների համար, դադարելով հարուստների համար դեմոկրատիա լինելուց, ինչպիսին շարունակում է մնալ դեմոկրատիան բոլոր բուրժուական և նոյնիսկ ամենալեմոկրատիկ հանրապետութիւնների մէջ: Առաջին անդամ ժողովրդական մասսաները հարիւր միլիոնաւոր մարդկանց մասշտաբով վճռում են իրազործել պրոլետարների և կիսապոլիտարների դիկտատուրայի հարցը, մի խնդիր, առանց որի վճռման խօսք անդամ չի կարող լինել սոցիալիզմի մասին:

Թող տառակերները կամ բուրժուական-դեմոկրատական և պարլամենտական նախապաշարմունքներով մինչեւ ուղն ու ծուծը անբուժելիօրէն վարակւած մարդիկ գլուխներն անհար—անհարակ օրօրեն մեր Խորհուրդների հանդէպ, շեշտելով օրինակ ուղղակի բնտրութիւնների պակասը: Այդ մարդիկ ոչինչ չեն սովորել 1914—1918 թթ. մեծ յեղաշրջումներից: Պրոլետարիատի դիկտատուրան շաղկապել է

ները դրաւել են հարուստներից քաղաքներում ու գիւղերում բոլոր լաւ շէնքերը, յատկացնելով՝ բան-որների ու գիւղացիների միութիւններին ու ժողով-ներին։ Ահա մեր ժողովների ազատութիւնն աշխա-տաւորների համար! Ահա մեր Խորհրդային, մեր սոցիալիստական սահմանադրութեան ոգին ու բո-վանդակութիւնը։

Եւ ահա թէ ինչո՞ւ մենք ամենքս խորապէս համողաւած ենք որ, ինչ փորձութիւններ էլ դան մեր Խորհրդային հանրապետութեան դլիսին, նա անպար-տելի է։

Նա անպարտելի է, որովհետև խելայել իմպե-րիալիստի իւրաքանչիւր հարուածը, իւրաքանչիւր պար-տութիւնը, որ կրում ենք մենք միջադրային բուր-ժուազիակց, պայքարի հրաւերելով միշտ բանւորների ու գիւղացիների նորանոր խաւեր, մեծագոյն զոհերի գնով, կոփելով նրանց՝ ծնում է մասսայական նոր հերոսութիւնը։

Մենք զիտենք, որ ձեղնից, ընկեր ամերիկեան բանւորներ, այնքան էլ շուտով չենք կարող օդնու-թիւն ստանալ, որովհետև յեղափոխութեան զարգա-ցումը տարբեր երկրներում տարբեր ձեռվ, տարբեր ընթացքով է գնում և այլ կերպ լինել չէ կարող։ Մենք զիտենք, որ ինչքան էլ արագ հասունանալիս լինի վերջին ժամանակս երոպական պրոլետարական յեղափոխութիւնը, այնուամենայնիւ կարող է և ըսոնկել առաջիկայ շաբաթները։ Մենք դրաւ ենք

աշխատաւորներին նւիրւած նոր դեմոկրատիայի հետ—քաղաքացիական պատերազմի կոչելով մասսաներին և ըստ ամենայնի հաղորդակից դարձնելով նրանց քաղաքականութեան,—այդպիսի շաղկապումը չի յա-չողւում մի անդամից և չէ պարփակւում պարլա-մենտական դեմոկրատիզմի հնամաշ ծևերի մէջ։ Նոր աշխարհ, սոցիալիզմի աշխարհ—ահա ի՞նչն է կանգնում մեր հանդէպ, որպէս Խորհրդային հանրապետութեան՝ իր գծագրութեամբ։ Եւ զարմանալի չէ, որ այդ աշ-խարհը չէ ստեղծւում պատրաստի, չէ ծնուռմ մէկէն, ինչպէս Միներվան՝ իւղիտերի զլսից։

Երբ հին բուրժուական դեմոկրատիկ սահմանա-դրութիւններն, օրինակ, ստորագրում էին ժողովնե-րի ձևական հաւասարութիւն և իրաւունք, մեր պրոլետարական և դիւղացիական Խորհրդային սահ-մանակրութիւնը ձևական հաւասարութեան փարի-սայութիւնը նետում է մի կողմ։ Երբ բուրժուական հանրապետականները գահեր էին տապալում, այն ժա-մանակ խօսք չէր կարող լինել միապետականների և հանրապետականների ձևական հաւասարութեան մա-սին։ Երբ խօսքը վերաբերում է բուրժուազիային տապալիսւն, միայն դաւաճաններն ու ազուշները կարող են պահանջել բուրժուազիայի իրաւունքների ձևական հաւասարութիւնը։ Մի քոո դոօշ արժէ բանւորների ու գիւղացիների համար «ժողովների ազատութիւնը», եթէ բոլոր յարմար և լաւագոյն շէնքերը զաւթել է բուրժուազիան։ Մեր Խորհուրդ-

առ զվարեանվիր լեռուց զդյ զողը շաղիո սպե վշտ  
հեր վեմպ քումանան մզդ բարդան մզդը  
:մօսն ուղղաքմակ ոչեառ

զմտատի մբեվտովմդիրվ մզդ եղեռու դեսու վշտոյլու  
նեսիս դ նվարդուանցունակ զոկտառովլովմդիրվ մզդ  
տոնեա քրիու մզդը :մզդեմնի ոչենցը դ նուու մար  
-ու ուղմնի զողը և ննու մզդու մզդու մզդը մզդը  
:մէ զմվիմդ մզդ զողը վլցուատու վրեսամգտուն  
զոկտառովլովմդիրվ եղմնի մս մմվիմդ զվետուս ոգ  
:զոմդ հըլեսոնի նու քաւանցանցուու զոկտառովլովմդիրվ  
վշիցը ք մշրգը ակնմտոր դարկիսմա մզդ վլշտմտուց  
մզդը մս մզդավի տոտուս մզդը ուսմն քուու

:վմդը

-մշրգը ասովսկուեցի զփքուսո զմդցուվը տատմուն մմու  
վր զդ մարտմոց մբուկիցա զողը շասկուիտեցի զի՞  
-տնեսնցիր դնցիր մս դ իսասոցտուն զողը շանցուոտցի  
կատուն վլովուսպ իսու ուկամազ վմդցմկտումդ մզդը  
հըլ Յս ունու դ զդը զոկտուս վլտում զոկտառով  
-տիմաս զմնցուու նուսու զմդցմցունցու մս մզդավի  
մզդը մբուգը ասուուքուրուս իդ Յս դ իսմշրտուն Յս զդ  
բաւաւտատի մմդցուվը ասովսկուեցի մս մզդավի դ մմ  
-զցցուվը ասովսկուեցի քզը ոսկմդ օլը Հ161 դ Զ061  
մզդ լուգու բաւմիմդ մզդ մզդը ոչմնանցի ցմոկ լոգը  
-սմս վամտատի զշմօվլցիտուսովցու վավիս մշրգը ասով  
-սկուեցի հըլ բաւզն մզդ ուուն մշրմտրին ոչենցը  
մզդը մս բաւաւցուն հ զմնուց հնու ննու ուուն վլշտմտու  
-զմտուադիզու զողը շասկուիտեցի զմտեսնցիր բաւց

Ապակը ։ Հ.

:մշրգը ասովսկուեցի

զոկտառովլումն զվետուայլուրաց կ վլտուատուու դա  
-գիսմա մզդ վլտուատուու մզդը իսմոու վր

:մշրգը ասկնմտոր եսուցուրմակ ու շում-տա  
-լակ եսուցուրմակ ուղիմմի կ վիտցվի կ զմտվր մմու  
:մշրգը ասովսկուեցի զոկտառովլումն վիոհն ոչմերս  
զոկտառովլուրմակ—զոկտակիվշնութ վիոհն զդ բաւցն  
մտունուց ննու բաւացն զդ ետեսն մմդցմուցու  
:միմդցմդցու ննու բաւացն զդ ետեսն մմդցմուցու  
:միմդցմդցու ննու բաւացն զդ ետեսն մմդցմուցու  
սո ննումդ զդ բաւաւուցու զմդցմուցու :մշրգմտու  
զուուգը ասկնուցամու վմդցցուվը բաւաւու վրեսկովմդիրվ  
բաւաւումտու դ զդ բաւացն բաւաւուցասուս մզտմդ  
մզտմդ զու ավը բաւաւումտու մզտմդ ուուկ մմդցմուցու  
ննու ննու մմդցմդցու ուուկ վմտօն մմդցմուցու

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ռ. Սոց. Ֆեդ. Խորհուրդների Հանրապետութեան  
Սահմանադրութիւնը.

2. Ն. Լենին—Նամակ Ամերիկան Բանտորներին, — գի-  
ւը՝ 1 ր.

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ԵՒ ՇՈՒՑՈՎ ԼՈՅՍ ԿՑԵՍՆԵՆ.

1. Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. Էնգել'ս—«Կոմմոնիստական Մա-  
սիֆեստը»—Պլեխանովի և հեղինակների յառաջարաններով.  
Թարգմ. Պ. Մակինցեանի.

2. ԶԻՉԵՐԻՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՆԸ Խորհուրդների 5-րդ  
համագումարին.

3. Վ. ՖՐԻՁ—«Պրոլետարական պօէզիան»:

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

1. Կ. ԿԱՐԻՑԿԻ—«Ճանապարհ դէպի իշխանութիւն».

2. ԼԵՆԻՆ—«Կարլ Մարքս», —Համառոտ կննադրութիւն  
և մարքսիզմի տեսութիւնը.

3. Ն. ԲՈՒԽԱՐԻՆ—«Դասակարգային պարբար և յեղա-  
փոխութիւնը Ռուսաստանում».

---

9 h u u t 1 p. 20 3 1 1

ՀՀ Ազգային գրադարան



NL0178396

